

Ասմունքի հանրապետական փառատոնի կիսաեզրափակիչ փուլը՝ Վայոց ձորում

30.10.2012



Եղեգնաձորի մարզային մշակույթի տանը կայացավ արդեն ավանդական դարձած ասմունքի մանկապատանեկան հանրապետական մրցույթ-փառատոնի մարզային փուլը: Այն այս տարի նվիրված է հայ մեծանուն և տաղանդաշատ գրողներ Սայաթ-Նովայի և Եղիշե Չարենցի հոբելյանական տերելիցներին: Փառատոնի մասնակիցներին ողջունեց ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը: Ներկաներին գրողների մասին կենսագրական տվյալներ ներկայացրեց բանասիրական գիտությունների թեկնածու Կարո Վարդանյանը: Փառատոնի ներդպրոցական փուլին մասնակցել են մարզի կրթական հաստատությունների շուրջ 1500 աշակերտներ: Փառատոնն անց է կացվել 2 տարիքային խմբերով՝ 11-14 և 15-17 տարեկանների խմբեր: Մարզային կիսաեզրափակիչ փուլին մասնակցեցին ներդպրոցական փուլում աչքի ընկած 41 լավագույն ասմունքողներ՝ 11-14 տարիքային խմբից՝ 17 աշակերտներ, իսկ 15-17 տարիքային խմբից՝ 22 աշակերտներ և 2 աշակերտներ կրտսեր տարիքի: Մասնագիտական ժյուրիի գնահատականներով 7 աշակերտներ արժանացան փառատոնի եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք: Գնահատման արդյունքները հրապարակեց փառատանի պատասխանատու քարտուղար՝ ժյուրիի նախագահ Մարիետա Մակարյանը: Մարզպետի անունից տեղակալ Մելս Հարությունյանը բանաստեղծությունների ժողովածուներ նվիրեց մրցանակային տեղեր գրված մասնակիներին: Իսկ Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Արփիար Ղազարյանը փառատոնի մարզային փուլի մասնակից բոլոր աշակերտներին պարգևատրեց գեղարվեստական գրքերով: Մրցանակային տեղեր գրված աշակերտները ներկայացնում են ներքոնշյալ դպրոցները.

15-17 տարիքային խումբ՝

1-ին տեղ՝ Ղազարյան Նելլի-Քարագլխի միջնակարգ դպրոց,

2-րդ տեղ՝ Գալստյան Զարուհի-Մալիշկայի թիվ 1 միջնակարգ դպրոց, 3-րդ տեղ՝

Լևոնյան Մերի-Աղավնաձորի միջնակարգ դպրոց:

11-14 տարիքային խումբ՝

1-ին տեղ՝ Գրիգորյան Կարեն-Վայքի հիմնական դպրոց,

2-րդ տեղ՝ Ալոյան Հրաչյա-Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց,

3-րդ տեղ՝ Բաբայան Ստեփան-Եղեգնաձորի ավագ դպրոց:

Կրտսեր տարիքի մեկ աշակերտ՝ Ասլանյան Բենիկ-Վայքի հիմնական դպրոց:

Նշենք, որ մարզպետ Էդգար Ղազարյանը մինչ մրցույթը հյուրնկալել էր փառատոնի մասնագիտական ժյուրիի անդամներին: